գրին՝ անկից Հռոմ անցնելու դիտումով։ Այս միտքը չի յիշուիր Առաքել Դաւրիժեցւոյ Պատմութեան մէջ։ Սա կաթողիկոսին քաղքէ քաղաք շրջելուն պատճառ կը ընէ՝ հակառակորդներուն և պարտատէրներուն երեսէն խուսափիլ, հանգիստ վայր մը գտնելու համար[1]։ Լէօպոլսոյ մէջ Մելքիսէթ անհովիւ մնացած ժողովրդեան վրայ կը ձեռնադրէ եպիսկոպոս զՆիկոլ[2]. և այլն։

Գալով «Կամենից»ի Յիշատակարաններէն միոյն՝ կը գտնենք 1683 թուականաւ այսպէս. «Որ ինչ ի գրքի աստ պարունակին՝ ժողովեցան յինէն ի զանազանից «գրոց և ի տետրակաց հնացելոց, մինչ պանդխտանայի ի Վերին Հայս, և ի մի «պարփակեցան աստ...։ Ես (Վարդան Յունանեան) ոչ հեղինակ սորին՝ այլ հաւաքող «միայն եմ. որպէս և զբազումս գայլս գրեանս ընդօրինակեցի ի Հայոց երկրէն, «որք չէին աստ յերկրի Լեհաց, վասն ջատագովութեան կաթուղիկէ հաւատոյ «ընդդէմ ոմանց հակառակասիրաց մերազնեայց» [ի Ս. Ղազար]։ «Կամենից» էջ 197։

Հ. Ցաշեան «Թուղթ քաջալերական»ը ցանկագրած ատեն աւելի պայծառօրէն հետեւեալ ամփոփ տեղեկութիւնները կը հաւաքէ, Վարդանայ կենաց և գործոց մասին. (տես Մայր Ցուցակ Հայ Ձեռ. Մխ. Վիեննայի. էջ 116) «Հեղինակն արդէն ինքզինք կը յայտնէ գրութեան մէջ իբրև արքեպիսկոպոսն Լէօպոլսոյ ԺԷ. դարուն վերջերն ու ԺԸ ի. սկիզբն, որ երկար ատեն ճամբորդած է Հայաստան են։ Եւ է Վարդան Յունանեան, որուն գրութեանց վրայ հետևեալը կը գրէ Ստեփանոս Ռոշքա իւր ժամանակագրութեան մէջ Յունանեանի մահուան առթիւ յամին 1715 (Ձեռ. 266, Թղ. 427. ա[2]) «Վարդան Յունանեան... էր խոհեմ, խորագէտ, ազգատոսէր և անպարապ ի գրելոյ և ի թարգմանելոյ. Թարգմանեաց զքարէխիզմն և զՊանանեայապետականն հռոմէական, Կերակուր քահանայից, Աստուած [աբանութիւն ?]. Պակասութիւնք Պատարագին, Ծիսարանն (մաշտոց), Գանձարան աղաւթից և այլն։ Գրեաց զՔաջալերական թուղթն առ Եվդոկիացիս, որ է գիրք լի վկայութեամբ Հայոց ժողովոցն, կաթողիկոսաց և վարդապետաց, մինչև ցիւր ժամանակն։ Ձեռնադրեաց եպիսկոպոս միայն զՕգսէնտիոս վարդապետն, իսկ զքահանայս բազումս. Նորոգեաց զբնակարանն Արքեպիսկոպոսականն, և այլն։ Վարդան Յունանեան արքեպիսկոպոսն մեր Լէօպոլսի ամաց 81, արքեպիսկոպոսութեանն յամի 29, յունիսի 15 մեծաւ ջերմեռանդութեամբ հանգեաւ ի Քրիստոս են[3]. »։

Ահա այս արքեպիսկոպոսն է, որուն մէկ նամակը, որ մահէն 8 տարի առաջ գրուած է, կը հրատարակենք հոս։ Սակայն կանխենք ըսելու. թէ փնասներ ունեցած է Շուէտացիներէն՝ այդ կը յիշատակուի. բայց թէ այդ թուականներուն իր

1. Պատմ. Առաքել Դաւրիժեցւոյ. Վաղարշ. 1884 էջ 173–174 և 339։

2. Մելքիսէթ կաթողիկոսի Իւլովի Հայութեան ուղղած խմբական ձեռագիր մեծադիր կոնդակը՝ որ պաշտօնապէս կը հաղորդէ զՆիկոլ իրենց եպիսկոպոս ձեռնադրած ըլլալը՝ կը գտնուի Ս. Ղազարու Դիւանին մէջ։ Ահա կարևոր մասը. «Զի եկաք ի յայստեղս աչնեաւ մայրաքաղաքն Իլով. իբրև ի յաթոռակալ տեղ. և տեսաք որ առաջրդ «չունէին. և բազում ժամանակս առանց առաջղի վարէին զկեանս իւրց. բազում անգամ մեզնէ առաջրդ խնդրէին. «յիմ եպիսկոպոսն. բայց ոչ կամեցայ զիմ եպիսկոպն այս տեղս առաջդ դնել. վասն որոյ ըստ խնդրոյ նց քննութի «արարաք ի միջի մերում, եպիսկոպսք. և միաբանիւք. Եւ ձեռնադրեցաք Զտր Նիկողոսն. Այս տեղացի. Պրն «Եագուպի որդին, Թորոսենց. Եւ աւծեցաք եպիս. մեր բարձր հայրապետական իշխանութեամբս Լուսաբուխ սր «մեռոնաւս և սր յաջողմն Տն սր Գրիգոր Լուսաւորչին. վկայութեամբ». եայլն... «Աւծեցաք զհովւոր որդին մեր «զտր Նիկողոսն Արքեպիս Լովա քղքին». և այլն. «Գրեցաւ. Թվ. ռհե. Դեկտ. ամսոյ ԻԹ. Ձեռամբ. մեղաւոր «գրչի բեւր քանքարոյ Պարտական. Սիմոն լոկանուն երիցուիս»։ Հուսկ բուն ստորագրութիւնը. «ՏՆ ՏՐ ՄԵԼՔԻ-«ՍԷԴ ԿԹՂԿՍ ԱՄ ՀԱՅՈՑ ԾՌՑ ՑԻ ՔԻ ՏՎԻ ԶԱՅՍ ԳԻՐՍ. ԶՆՌԱԳԻՐ ԱՅՍ Է»։

3. Վարդան արքեպս.ի վրայ տես անցողակի համառօտ ծանօթութիւն մ'ալ ի «Պատմ. Հայերէն Դպրութեան. Բ. Նոր Մատենագրութիւն» Հ. Զարբհանալեանի. Վենետիկ 1905. էջ 297–298։